

## **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն միանում է ՀԲ-ի՝ ՓՄՁ-ներին աջակցման վարկային ծրագրին**

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպությունը միանում է ՀԲ-ի՝ «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» վարկային ծրագրին: Այսօր համապատասխան պայմանագիր են կնքել ՀՀ ԿԲ փոխնախագահ Վաչե Գաբրիելյանը և վարկային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն Արմեն Գաբրիելյանը:

Ինչպես նշեց Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանը, հենց սկզբից ծրագրին մասնակցում էին հայաստանյան 7 առևտրային բանկեր, իսկ այսօր ֆինանսական կազմակերպությունների թիվը հասել է 13, այդ թվում՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈԻՎԿ:

Վաչե Գաբրիելյանի խոսքով, «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» ծրագրի շրջանակում ՀԲ-ն Կենտրոնական բանկին տրամադրել է 50 միլիոն դոլար, որը ծրագրի մասնակիցները ստանալու են տարեկան 8 տոկոս տոկոսադրույքով: Թե «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ընկերությունը ինչքան կստանա, ԿԲ փոխնախագահը դժվարացավ պատասխանել՝ նշելով, որ դա կախված է լինելու նրանից, թե ինչքան նրանք կհասցնեն տեղաբաշխել:

ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Բրյուս Դոնահյուն իր հերթին նշեց, որ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ընկերությունը սերտորեն համագործակցում է ԱՄՆ պետդեպարտամենտի, «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի, «Ֆարմ Կրեդիտ ԱՄՆ»-ի ու Համաշխարհային բանկի հետ: